28 դեկտեմբերի 2016 թ. N 891-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 857-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «2016 թվականին ցրտահարությունից տուժած ծխախոտի դաշտերի տերերին պետական աջակցություն ցուցաբերելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» N 857-Ա որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Թույլատրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 04 բաժնի 2 խմբի 1 դասի «12 Գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրեր» ծախսային ծրագրի «Գարնանացան մշակաբույսերի ցանքաշրջանառության ծրագրերի խթանում» միջոցառմամբ նախատեսված միջոցներից, սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով, 21 750 000 (քսանմեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով գումար հատկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին՝ համաձայն հավելվածի, հողօգտագործողներին բաշխելու նպատակով:»:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**